

Բարձրագույն կրթության
ֆինանսավորման
ռազմավարություն.

Ֆինանսավորման նոր կառուցվածք

Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր կառուցվածք

Գործող կառուցվածք

Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստներ

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ

ՀՀ
Պետական
Բյուջե

Նոր կառուցվածք

ԲՈՒՀ-երի ֆինանսավորում ըստ կատարողականի (շրջանավարտների թվաքանակի գերակա մասնագիտ. գծով)

ԲՈՒՀ-երի կապիտալ ծախսերի ֆինանսավորում

Առաջադիմության - կարիքավորության վրա հիմնված ուսանողական նպաստներ (կրթաթոշակներ)

Ուսանողական վարկերի համակարգի ներդրման ծախսերի ֆինանսավորում

Ուսանողական նպաստներ (կրթաթոշակներ) սոցիալական առանձին խմբերին

ԲՈՒՀ-երի զարգացման ծրագրերի ֆինանսավորում

«Լավագույն ուսանող» կրթաթոշակ (Սահմանադրական պահանջ)

ԲՈՒՀ-երի ֆինանսավորումը ըստ կատարողականի

- ԲՈՒՀ-երի ֆինանսավորումը ըստ յուրաքանչյուր տարվա շրջանավարտների թվաքանակի, որոշակի գերակա մասնագիտությունների գծով
- Շրջանավարտներին որակավորման աստիճանի շնորհում որակի ապահովման պահանջներին համապատասխան
- Յուրաքանչյուր շրջանավարտի հաշվով ֆինանսավորման չափի որոշում պայմանավորված պահանջվող համապատասխան ծախսերի մակարդակով և աշխատուժի շուկայում նրա պահանջվածության աստիճանով

Առաջադիմության և կարիքավորության վրա հիմնված ուսանողական նպաստներ (կրթաթոշակներ)

- Առաջադիմության և կարիքավորության վրա հիմնված կրթաթոշակներ՝ բարձրագույն մասնագիտական կրթության գծով ներկայումս գործող ուսանողական նպաստների փոխարեն
- Կրթաթոշակների տրամադրում ուսանողի առաջադիմության և կարիքավորության աստիճանի միասնական գնահատականի հիման վրա
- Ուսանողի կարիքավորության աստիճանի որոշման հնարավոր տարբերակներ
 - կարիքավորության աստիճանի որոշման Փարոս համակարգ,
 - կարիքավորության աստիճանի որոշման ինքնուրույն համակարգ՝ Փարոս համակարգի որոշ տարրերի կիրառմամբ
- Կրթաթոշակների տրամադրման կազմակերպչական կառուցվածքի հնարավոր տարբերակներ
 - կրթաթոշակների տրամադրում առանձին կենտրոնացված կառույցի միջոցով
 - կրթաթոշակների տրամադրում ԲՈՒՀ-երի միջոցով

Ուսանողական նպաստներ (կրթաթոշակներ) սոցիալական առանձին խմբերին

- Սոցիալական առանձին խմբերին ուսանողական նպաստների տրամադրման ներկայումս իրականացվող քաղաքականության շարունակություն
- Սոցիալական առանձին խմբերն են՝
 - Երկկողմանի ծնողագուրկ երեխաները,
 - Առաջին և երկրորդ կարգի հաշմանդամները,
 - Չոհված ազատամարտիկների երեխաները,
 - Ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողները,
 - և այլն

«Լավագույն ուսանող» կրթաթոշակ

- Յուրաքանչյուր մասնագիտության ամենաբարձր առաջադիմություն ունեցող ուսանողին կրթաթոշակի տրամադրում
- Իրականացման հնարավոր տարբերակներ
 - կրթաթոշակի տրամադրում յուրաքանչյուր պետական բուհի յուրաքանչյուր մասնագիտության գծով և բոլոր կուրսերում
 - կրթաթոշակի տրամադրում պետական բուհերի յուրաքանչյուր ֆակուլտետում մեկական

ԲՈՒՀ-երի կապիտալ ծախսերի ֆինանսավորում

- ԲՈՒՀ-երի խոշոր կապիտալ ծախսերի ֆինանսավորում կառավարության կողմից
- Ֆինանսավորման հիմնական ուղղություններ
 - ԲՈՒՀ-երի շենքային պայմանների բարելավում
 - ԲՈՒՀ-երի տեխնիկական վերազինում
- Ֆինանսավորման վերաբերյալ որոշման կայացում ներդրումային ծրագրի ծախս-օգուտ վերլուծության հիման վրա

Բուհերի զարգացման ծրագրերի ֆինանսավորում

- Որակի ապահովման ծրագրերի ֆինանսավորում
- Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
- Աջակցություն բուհերի կազմակերպչական - կառուցվածքային բարեփոխումներին
- Բոլոնիայի գործընթացի ակտիվացմանը նպաստող արդյունավետ ֆինանսավորման մեխանիզմների ներդրում

Որակի ապահովման ու ֆինանսական բարեփոխումների կապը

- Որակի ապահովման գործընթացներին առընչվող բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումներն են.
 - Հաստատություններից ֆինանսական տվյալների հավաքագրման բարելավում՝ որպես որակի վերահսկողության ու ապահովման գործընթացի մաս
 - Հաստատությունների և նրանց ուսանողների կողմից պետական աջակցության ստացման նվազագույն ստանդարտների սահմանում
 - Ցածրորակ ծառայություններ մատուցող հաստատությունների գործունեության դադարեցում (այդ թվում նաև ֆինանսական լծակներով)

Աջակցություն բուհական համակարգի կազմակերպչական կառուցվածքային բարեփոխումներին

- Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր կառուցվածքի իրականացման մեխանիզմները իրենց մեջ կներառեն պետական բուհերում կրկնվող մասնագիտությունները համախմբելու գործընթացը խթանող ֆինանսական ազդակներ
- Կառվարությունը լրացուցիչ միջոցներ կտրամադրի, մասնավորապես, փոքր բուհերի միավորման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար

Մասնավոր ոլորտի մասնակցության խթանումը բարձրագույն կրթության ֆինանսավորման գործընթացում

Բարձրագույն կրթության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ կատեղծվեն հետևյալ հարկային արտոնությունների կիրառմամբ`

1. Բուհերի կողմից վճարվող շահութահարկի բազայի լրացուցիչ նվազեցումներ թույլատրել այն գումարների չափով, որոնք կուղղվեն ուսման վարձի գեղջմանը
2. Սահմանել շահութահարկի և եկամտահարկի լրացուցիչ արտոնություններ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք ֆինանսական և նյութական աջակցություն կտրամադրեն բարձրագույն կրթության համակարգին:

<p>Քաղաքականության միջոցառումներ</p>	<p><i>Ռազմավարական նպատակներ</i></p>
<ul style="list-style-type: none"> ➤ Ստեղծել այնպիսի քաղաքականություն, որը խրախուսում է բուհերի է ընդունելությունը առանց ուսման վարձը բարձրացնելու ➤ Ստեղծել կրթաթոշակներ՝ համակցելով առաջադիմության եվ կարիքավորության սկզբունքները 	<p>Մասնակցության աճ</p>
<ul style="list-style-type: none"> ➤ Սահմանել կրթաթոշակներ սոցիալապես անապահով ուսանողներին համար ➤ Ապահովել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն գյուղական վայրերից ուսանողների համար ➤ Ստեղծել մրցունակ և նորարարական հիմնադրամ, որտեղ որակն ու համապատասխանությունը գերակա ուղղություններ կլինեն ֆինանսավորման համար 	<p>Անհավասարության նավազեցում</p>
<ul style="list-style-type: none"> ➤ Ստեղծել վարկային պիլոտային ծրագիր ուսանողի համար, որը նպատակաուղղված է ուսանողի ուսումնառության խրախուսմանը շուկային բարձր համապատասխանության ոլորտներում ➤ Վերանայել նորմատիվների արժեքը արտացոլելու համար համապատասխանությունը ➤ Հզորացնել որակի ապահովման ընթացակարգերը ➤ Պահանջել գիտահետազոտական ինստիտուտներից համագործակցություն համալսարանների հետ հետազոտական աշխատանքների ֆինանսավորման առաջարկներ կատարելու ուղղությամբ 	<p>Որակի և համապատասխանության կատարելագործում</p>
<ul style="list-style-type: none"> ➤ Հիմնել կատարողականի վրա հիմնված վճարումներ ➤ Ստեղծել կապիտալ բյուջե շենքերի և սարքավորումներ համար ➤ Վերանայել նորմատիվների արժեքը, որը արտացոլում է առավել օպտիմալ հարաբերակցությունները ➤ Հիմնել հիմնադրամ, որը խրախուսում է փոքր բուհերի ինտեգրումը ➤ Սահմանել հարկային արտոնություններ, որոնք խրախուսում են մասնավոր ներդրումները բարձրագույն կրթություն ոլորտում 	<p>Արդյունավետության բարձրացում</p>
<ul style="list-style-type: none"> ➤ Օգտագործել որակի ապահովման ընթացակարգերը համապատասխանեցնելու համար ուսումնական ծրագրերը Բոլոնիայի գործընթացի սահմանումներին ➤ Համոզվել, որ բուհերին տրված վճարումները շաղկապված են այն շրջանավարտների հետ, որոնք բավարարում են Բոլոնիայի սահմանումներին 	<p>Բոլոնիայի գործընթացի համապատասխանության բարձրացում</p>

Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր կառուցվածքի ծախսային գնահատականներ

	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը բարձրագույն կրթության բյուջե (մլն. դրամ)	9393,3	9369,1	9352,8	9350,9	9369,0
Կրթաթոշակներ և աջակցություն ուսանողներին	4963,5	4957,8	4956,4	4962,5	4978,8
«Առաջադիմություն և կարիք» կրթաթոշակ	3769,2	3753,5	3740,9	3734,3	3735,9
«Սոցիալական առանձին խմբեր» կրթաթոշակ	538,5	536,2	534,4	533,5	533,7
«Լավագույն ուսանող» կրթաթոշակ	419,5	432,1	445,0	458,4	472,1
Ուսանողական վարկերի ներդրման ծախսեր	236,4	236,1	236,0	236,3	237,1
Աջակցություն ԲՈՒՀ-երին	4429,8	4411,2	4396,4	4388,5	4390,1
Ֆինանսավորում ըստ կատարատղականի	2041,0	2032,5	2025,7	2022,1	2023,0
Կապիտալ ծախսերի ֆինանսավորում	1592,5	1585,8	1580,4	1577,5	1578,1
ԲՈՒՀ-երի զարգացման ծրագրերի ֆինանսավորում	796,3	792,9	790,2	788,8	789,1
Քանակական ցուցանիշներ					
Ուսանողների թվաքանակը	102454	99051	95840	92880	90208
Պետական ԲՈՒՀ-եր	81807	79089	76525	74160	72026
Կրթաթոշակ ստացող ուսանողներ	14650	14207	13789	13404	13056
Վճարովի հիմունքներով սովորող ուսանողներ	67158	64882	62735	60756	58970
Մասնավոր ԲՈՒՀ-եր	20647	19962	19316	18720	18182

Ծախսային գնահատականների հիմնական սցենարի հիմքում ընկած ենթադրությունները

- Ժողովրդագրական զարգացումները (ծնելիություն, միգրացիա, մահացություն) կընթանան վերջին 5 տարիների միջինացված միտումների շրջանակներում,
- Բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության աստիճանը համապատասխան տարիքային խմբի (15-24 տ.) բնակչության նկատմամբ կմնա անփոփոխ
- Պետական բուհերի ուսանողների մասնաբաժինը ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ կմնա անփոփոխ

Ծախսային գնահատականների հիմնական սցենարի հիմքում ընկած ենթադրությունները (շարունակություն)

- Պետական բուհերում տարբեր տեսակի կրթաթոշակ ստացող ուսանողների մասնաբաժինը կմնա անփոփոխ
- Պետական բուհերում ուսման վարձերի չափերը կվերանայվեն սղաճի չափով
- Պետական բուհերում կրթաթոշակների միջին չափի հարաբերակցությունը ուսման վարձի միջին չափի համեմատ կմնա անփոփոխ և կկազմի 90 տոկոս

Ծախսային գնահատականների վրա առանձին գործոնների ազդեցությունը

- Բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության աստիճանի **1 տոկոսի աճը** ավելացնում է բարձրագույն կրթության բյուջեն **0.45 տոկոսով**
- Պետական բուհերի ուսանողների մասնաբաժնի **1 տոկոսի աճը** ավելացնում է բարձրագույն կրթության բյուջեն **0.48 տոկոսով**
- Պետական բուհերում տարբեր տեսակի կրթաթոշակ ստացող ուսանողների մասնաբաժնի **1 տոկոսի աճը** ավելացնում է բարձրագույն կրթության բյուջեն **0.42 տոկոսով**

Ծախսային գնահատականների վրա առանձին գործոնների ազդեցությունը (շարունակություն)

- Պետական բուհերում ուսման վարձերի բարձրացումը սղաճից **1 տոկոս** ավել չափով ավելացնում է բարձրագույն կրթության բյուջեն **0.51 տոկոսով**
- Պետական բուհերում ուսման վարձի միջին չափի համեմատ կրթաթոշակների միջին չափի հարաբերակցության աճը **1 տոկոսով** ավելացնում է բարձրագույն կրթության բյուջեն **0.53 տոկոսով**